

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**Օ Ր Ե Ն Ք Ը**

**«ՀԱՍՏԱՏԱԳՐՎԱԾ ՎՃԱՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ  
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**Հոդված 1.** «Հաստատագրված վճարների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության 1998 թվականի հոկտեմբերի 19-ի ՀՕ-27 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 7-րդ հոդվածի «իզ» կետում, 93.11-րդ և 93.13-րդ հոդվածների 1-ին մասում «հեծանիվներ» բառից և դրա հոլովածից առաջ լրացնել «մեխանիկական և էլեկտրական մանկական ավտոմեքենաներ,» բառերը և դրա հոլովածը:

**Հոդված 2.** Օրենքի 8-րդ հոդվածում լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր պարբերություններ.

«Սույն օրենքի 7-րդ հոդվածի «ա», «ա<sup>1</sup>», «ա.2», «դ» (բացառությամբ ավտոբուսներով և միկրոավտոբուսներով), «ե», «է», «ժե», «ժթ», «ժթ.1» և «իզ» կետերով նախատեսված գործունեության տեսակների մասով հաստատագրված վճարի չափը հաշվարկելիս Ստեփանակերտ քաղաքում լրացուցիչ կիրառվում է 0,5, գործակից:

Սույն օրենքի 7-րդ հոդվածի «ա», «ա<sup>1</sup>», «ա.2», «զ», «դ», «ե», «է», «թ», «ժ», «ժե», «ժթ», «ժթ.1», «ի», «իա», «իբ» և «իզ» կետերով նախատեսված գործունեության տեսակների, հաստատագրված վճարի չափը հաշվարկելիս շրջկենտրոններում և այլ վայրերում լրացուցիչ կիրառվում է 0,3 գործակից:»:

**Հոդված 3.** Օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասում «32-ապատիկի չափով» բառերը փոխարինել «20-ապատիկի չափով» բառերով:

**Հոդված 4.** Օրենքի 25<sup>4</sup>-րդ հոդվածի տեքստը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Առևտրի իրականացման վայրում առևտրական գործունեության համար հաստատագրված վճարի հաշվարկման համար ուղղիչ գործակիցներն են՝

Ստեփանակերտ քաղաքի համար՝	1,1.
շրջկենտրոնների համար՝	0,9.
այլ վայրերի համար՝	0,5:»:

**Հոդված 5.** Օրենքի 41-րդ հոդվածի 2-րդ մասում «1.6» թիվը փոխարինել «1,2» թվով:

**Հոդված 6.** Օրենքի 59<sup>5</sup>-րդ հոդվածի «ա» կետում «4» թիվը փոխարինել «1» թվով:

**Հոդված 7.** Օրենքի 90-րդ հոդվածի՝

- 1) «ա» կետում «2.0» թիվը փոխարինել «1,3» թվով.
- 2) «բ» կետում «1.5» թիվը փոխարինել «0,8» թվով.
- 3) «գ» կետում «1.0» թիվը փոխարինել «0,5» թվով.

**Հոդված 8.** Օրենքի 17.3-րդ գլխում՝

1) վերնագիրը «ՀԵԾԱՆԻՎՆԵՐԻ» բառից առաջ լրացնել «ՄԵԽԱՆԻԿԱԿԱՆ ԵՎ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՄԱՆԿԱԿԱՆ ԱՎՏՈՄԵՔԵՆԱՆԵՐԻ,» բառերով.

2) 93.11-93.14-րդ հոդվածներում «Հեծանիվների» բառերը փոխարինել «Մեխանիկական և էլեկտրական մանկական ավտոմեքենաների, հեծանիվների» բառերով:

**Հոդված 9.**

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2019 թվականի հունվարի 1-ից:

2. Սույն օրենքն ուժի մեջ մտնելու պահից հետո՝ քսան օրվա ընթացքում, Օրենքի 7-րդ հոդվածի «ա», «ա՛», «ժե» կետերով նախատեսված և «դ» կետով նախատեսված՝ բեռնատար ավտոմեքենաներով գործունեություն իրականացնող իրավաբանական անձինք և անհատ ձեռնարկատերերը պարտավոր են իրենց

հաշվառման վայրի հարկային մարմին ներկայացնել հայտարարություն՝ ելակետային տվյալների և ուղղիչ գործակիցների վերաբերյալ:

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՆԱԽԱԳԱՀ**

**Բ. ՍԱՀԱԿՅԱՆ**